

Բաժանորդագին կԱՆԻՍԻՆ՝ Թուրքիոյ համար տարեկան 50 դր, Ռուսիոյ համար 5 ռուբլի, ուրիշ երկրներու համար 12 ֆր:

Վեցամսեայ եւ եռամսեայ բաժանորդագրութիւնք եւս կ'ընդունուին:

Գաւառներէն Օսմանեան նամակադրոշմ կ'ընդունուի՝ 1 դրշնոցը 34 փարայի հաշւով, կամ 100 դրուշի փոխարէն 115 դր:

ԾԱՂԻԽԻ վերաբերեալ ամէն գործի համար դիմել

Առ ՏԵՐԵԿԵ-Հրատարակիչ
ՅԱՆՆԱՆ Գ. ՓԱԼԱԿԱՇԻԱՆ
Պոլիս, Պաշտէ-Գաբու, Թաշխան, քիւ 50

ԾԱՂԻԽ

Հ Ր Ա Պ Ի Ր

درجلیده بفتح قوسنده طاش خاندہ
ہ نومروده «زاغیک» غزتہ سی مدیری
بالاقشیان حوونان

S'adresser à
HOVNAN PALACACHIAN
Directeur du journal arménien «Dzaghih»,
Rue Bahtché-Kapou, Tach Han, 50
CONSTANTINOPLE

40 փարա

Ազգային, Քաղաքական եւ Գրական

40 փարա

ՆՈՐ ԵՐԱՅԱՆ — Բ. ՏԱՐԻ. ԹԻՒ 26

ՇԱԲԱԹ

11 ԱՊՐԵԼ 1892

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Վեհ. Սուլթանը բարեհաճեցաւ այս տարի եւս Զատիկի տօնին առթիւ 400 Օսմ. ոսկի շնորհել Ազգ. Պատրիարքարանի անհրաժեշտ ծախուց համար:

— Անգլիական դեսպանատան առաջին թարգմանը, Հայ-Հռոմէականաց Պատրիարքական Գեր. Փոխանորդն՝ ընկերակցութեամբ եկեղեցականի մը եւ Պատրիարքարանի գործակատարին, կիրակէ օր Ազգ. Պատրիարքարան եկան շնորհաւորելու Ս. Զատիկը: Իսկ երկուշաբթի օր եկան Գատը-գիւղի եւ Իւսկիւտարի Ս. Խաչ եկեղեցւոյ Թաղական Խորհրդոյ դիւանները: Ընդունելութիւնք կատարուեցան Պատրիարքական սենեկին մէջ:

— Պատրիարքական Փոխանորդ Գեր. Գաբրիէլ Մ. վարդ. Ճէվահիրճեան, ընկերակցութեամբ Գեր. Մովսէս Մ. վարդ. Կէօմրիկճեանի, Գեր. Իգնատիոս Մ. վարդ. Շիշճեանի, Մայր եկեղեցւոյ Թաղ. Խորհրդոյ անդամներէն Մեծ. Էնքէրճեան Պօղոս ու Գարագաշեան Նասիպ էֆէնտիներու եւ Պատրիարքարանի գործակատարի օգնական Գասպարեան Յարութիւն էֆէնտիի, Զատիկին երկրորդ օրը Ֆէնէրի Պատրիարքարանը գնաց եւ նախ ընդունուեցաւ Յունաց Գեր. Փոխանորդին կողմանէ, եւ պատուասիրուելէ յետոյ առաջնորդուեցաւ Ամեն. Տ. Նէօֆիտոս Պատրիարքին մօտ: Գեր. Ճէվահիրճեան շնորհաւորեց Զատիկական տօնն եւ իրեն ընկերացող եկեղեցականներն ու աշխարհականները ներկայացուց Տ. Նէօֆիտոս Պատրիարքին: Գեր. Փոխանորդ Հայրն ու իրեն ընկերացողը՝ Յունաց Ամեն. Պատրիարքին կողմանէ պատուասիրուելէ յետոյ՝ հանդիսաւոր կերպիւ առաջնորդուեցան Ֆէնէրի Մայր եկեղեցին, ուր աղօթեցին եւ ի վերջոյ հանդիսաւոր կերպիւ մինչեւ եկեղեցւոյ դուռն առաջնորդուելով մեկնեցան:

Գեր. Փոխանորդ Հայրն՝ ընկերակցութեամբ Պատրիարքարանի գործակատարի օգնականին, նոյն օրն ի Բերա Հայ Հռոմէականաց Պատրիարքարանն, յՕրթագիւղ Պուլիարաց էկզարքարանը եւ ի Պէշիկթաշ Տատեան վսեմ. Յարութիւն փաշայի ապարանքն եւս երթալով, շնորհաւորեց Զատիկական տօնն եւ ամենուրեք պատուասիրուեցաւ:

— Վեհափառ Սուլթանը բարեհաճեցաւ Գ. կարգի Օսմանիյէ պատուանշան շնորհել Պուլայ թեմին եկեղեցական պատգամաւոր Գեր. Մաղաքիա Եպիսկոպոս Օրմանեանի եւ աշխարհական պատգամաւոր Կիւմիւշէրտան Մեծ. Տիգրան էֆէնտիի:

— Կաթողիկոսական ընտրութեան մասնակցելու համար աշխարհական պատգամաւոր ընտրուած են, Գաղատիոյ վիճակէն՝ տեղւոյն վաճառականներէն Կիւլպէնիեան Մեծ. Յովհաննէս էֆէնտի, Պալքէսէրի Կրօն. ու Քաղ. ժողովոց կողմանէ՝ Ալաճաճեան Համբարձում էֆէնտի, թէ և օրէնք է որ աշխարհական պատգամաւոր ընտրութեան միայն աշխարհականք կը մասնակցին:

— Մշտ Գաւառ. Ընդհ. ժողովն վիճակին աշխարհական պատգամաւոր ընտրեք է Կարնոյ պատգամաւոր Տ. Աղարեան Մեծ. Կարապետ էֆէնտին որ սիրայօժար ընդունել է այս պաշտօնն եւս:

— Կարնոյ Պատր. Փոխանորդ Գեր. Ղևոնդ Սրբազանի վերջին հրաժարականն եւս Պատրիարքարանէն մերժուած լինելով, Ն. Սրբազնութիւն ետ առել է իւր հրաժարականն ի Պատրիարքական փոխանորդութենէ եւ յառաջնորդական ընտրելիութենէ:

— Կաթողիկոսական ընտրութեան մասնակցելու համար, Սերաստիոյ Գեր. Առաջնորդին կողմանէ եկեղեցական պատգամաւոր կարգուած է Էջմիածնայ միաբաններէն Նահապետեան Արթ. Նահապետ աբեղան, իսկ դաւառին կողմանէ՝

մանէ աշխարհական պատգամաւոր ընտրուել է Գաղատիոյ պատգամաւոր Կիւլպէնիեան Մեծ. Յովհաննէս էֆէնտի: Երկրորդ դաւառին կողմանէ աշխարհական պատգամաւոր ընտրուել է Մեծ. Համբարձում էֆէնտի Լէբեան:

— Մայրաքաղաքի ժամանեցին Կեսարիոյ Առաջնորդ. Գեր. Տրդատ Մ. վարդ. Պալեան եւ վիճակին աշխարհական պատգամաւոր Մեծ. Համբարձում էֆէնտի: Մոստիշեան, Անգլիանուպոլսոյ Առաջնորդ Գեր. Մեսրոբ Եպիսկոպոս եւ վիճակին աշխարհական պատգամաւոր Մեծ. Մաքսուտ էֆէնտի: Մանտաճեան, Ռոտտոթոյի Հոգեւոր Հովիւ Գեր. Հրմայեակ Եպիս. Դիմաքեան եւ վիճակին աշխարհական պատգամաւոր Մեծ. Տոքթ. Յակոբ էֆէնտի: Նէվրուզեան, Կեսարիոյ Գեր. Առաջնորդն եւ աշխարհական պատգամաւորն Հիւրընկալուեցան Ազն. Էսաեան Եղբարց բնակարանն ի Բերա:

— Պրուսայի քահանայներէն Արթ. Տ. Գասպար իւր հիւանդութիւնը դարմանելու համար Պոլիս եկած լինելով, շաբաթ երեկոյ հանգեաւ ի Տէր. Երկուշաբթի առաւօտ Մայր եկեղեցւոյ մէջ Գեր. Արիստակէս Մ. վարդապետ վանքեան պատարագելով, Գեր. Բարթողիմէոս Սրբազան Արքեպիսկոպոս կատարեց Օծումը սրտառուչ արարողութեամբք, եւ դամբանականն եւս խօսելով՝ գեղեցիկ իմն բացատրեց քահանայութեան նուիրական կոչումն:

— Քանի մ'օրէ ի վեր, ազգայնոց երեւելիք, մանաւանդ Կեսարացիներէն, խումբ խումբ Բերա Ազնուաշուք Էսաեան Եղբարց տունն երթալով, բարի գաղուստ կը մաղթեն Կեսարիոյ Առաջնորդ Գեր. Տրդատ Մ. վարդապ. Պալեանի եւ աշխարհական պատգամաւոր Մոստիշեան Մեծ. Յովհաննէս Էֆէնտիի:

— Պուլիարաց էկզարքարանի Գեր. Փոխանորդն եւ գործակատարն Հինգշաբթի օր, իսկ Յունաց Պատրիարքական

Գեր. Փոխանորդն և ուրիշ երկու եկեղեցականք և երկու աշխարհականք Ազգ. Պատրիարքարան գալով, շնորհաւորեցին Ս. Զատիկը:

— Կեսարիոյ և Անդրիանուպօլսոյ առաջնորդք և աշխարհական պատգամաւորք, ինչպէս և Երուսաղէմայ աշխարհական պատգամաւորն, հինգշաբթի օր այցելեցին Ս. Պատրիարք Հօր և Երուսաղէմայ Պատր. Փոխանորդ Գեր. Սէֆէրեան Սիմէօն Սրբազանի:

— Մի քանի օրէն մայրաքաղաքս կը հասնի նաեւ Երուսաղէմայ եկեղեցական պատգամաւոր Գեր. Սահակ եպիս. Խապայեան:

— Ի Թիֆլիս, հայ թատերասիրաց ընդհանուր ժողովոյ մարտ 22ի նստին մէջ, ժողովականք յոտնկայս ցաւակցութիւն յայտնեցին Սրապիոն Հէքիմեանի մահուան համար և որոշեցին ցաւակցական հեռագիր մ'ուղղել հանգուցելոյն ընտանեաց ի Թիֆլիս:

— Ս. Պատրիարք Հայրն և Քաղաքական ժողովոյ Առեւտրային Վսեմ. Մաքսուտ Սիմօն պէյ հինգշաբթի երեկոյ ընթերցեցին Կայսերական պալատան մէջ:

— Կեսարիոյ Առաջնորդ Գեր. Տըրգատ Ս. վարդ. Պալեանի արդիւնաւոր պաշտօնավարութենէն գոհունակութիւն յայտնող երեք հանրագրութիւնք հասած են ի Պատրիարքարան: Առաջինը Կեսարիոյ քաղաքին կողմանէ եկած է և կը պարունակէ 800 ստորագրութիւն. երկրորդը էփէրէկի և Ֆէնէպէի ժողովուրդեան կողմանէ եկած է և կը պարունակէ 300 ստորագրութիւն. երրորդը կը պարունակէ ազգային ժողովոյ անդամոց և պաշտօնական անձանց 25 ստորագրութիւնները: Այս երեք հանրագրութիւնք կը խնդրեն նաեւ ապաշխարհանաց ենթարկել այն չորս քահանայներն ու մէկ վարդապետն որոց ստորագրութիւններն ևս կը գրանուին եղբոր աւելի յառաջ եկած 25 ստորագրութիւն պարունակող հանրագրութեան մը մէջ:

— Արթ. Տէր Եղիշէ քահանայ Փափագեան, որ կը պաշտօնավարէր յէփէփի (Տրապիզոնի վիճակ) և վերջերս ի Թրիպօլի կը քահանայագործէր առժամանակեայ կերպիւ՝ տեղացւոց խնդրանք, Պոլիս եկած և Պատրիարքարանի կարգադրութեամբ սկսած է քահանայագործել առ այժմ Գաթըն-գիւղի Ս. Թադաւոր եկեղեցւոյ մէջ:

— Կեսարիոյ Յակոբեան վարժարանին նախկին աշակերտներէն Գէորգ Էֆ. Ճամճեան մէկ օրինակ տարեկան Մաղիկ նուիրեց նոյն վարժարանին:

— Ահնայ Ներսիսեան վարժարանին ուսուցիչ կարգուեր է «Մէճէլէ»ի ծա-

նօթ թարգմանիչ Նիկողոս Էֆ. Թօթփայեան:

— Եփէի-գարուի հրկիզեց ի նըպաստ հաւաքեալ 5000 զօրը Ս. Զատիկ առաջին օրը բախուեցաւ:

— Ս. Զատիկ առաջին օրը Ազգ. Պատրիարքարան այցելութեան եկան Հայ-Հռովմէականաց Պատրիարքական Փոխանորդ Գեր. Կարապետ եպիս. Ասլանեան և Եւոդոկիոյ Հայ-Հռովմէականաց նոր Առաջնորդ Գեր. Սահակ վարդ. Հաճեան:

— Փէշթայէն մայրաքաղաքս եկած է Մեծ. Պ. Յակոբ Զալընկարեան, աշխատակից Քրանսերէն Ռըվիս Օնիան, գերմաներէն Ռէթեր Լոյս և մաճառերէն Պուսափէթի Հիւրաք լրագրաց, Պ. Զըլինկարեան, բնիկ Ախալքալաքցի, մասնագէտ գիւղատնտեսութեան, իւր ուսմունքն առած է Գերմանիոյ Միւնիխ և Հալլէ քաղաքաց մէջ. Պ. Զիլինկարեան օթեւանած է Օթէլ տը Բէշթ պանդոկն ի Բերա:

— Յունվար 6ին պատահած Կուր գետի աղէտի մասին բացուած քննութիւնն աւարտած լինելով, Թիֆլիսի արդարութեան գործոց պաշտօնատան գլխաւոր գատախաղն նահանգական վարչութեան յայտնեց իւր որոշումը, այն է թէ քրէական դատաստանի ենթարկուի Թիֆլիզ քաղաքի 3րդ մասի ոստիկանապետն իբրեւ մեղադրելի այնպիսի յանցանքների մէջ որոնք նախատեսուած են քրէական օրէնագրքի 1604, 1466 եւ 1060րդ յօդուածներով, նաեւ հաշտարար դատաւորների ձեռքով դրած պատիժների 65րդ յօդուածով:

— Ի Թաւրէզ կրթական «Սէր» անուամբ ընկերութիւն մը կազմուեր է, որուն նպատակն է ուսումն տարածել աղքատ դասակարգին մէջ, մանաւանդ գիւղերու մէջ դպրոցներ հիմնել գիւղական մատաղ սերունդը կրթելու համար: Առ այժմ ունեցեր է 70 բաժանորդ:

— Յաւելով մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի վիճակում և նրանից մօտիկ Մցխեթ, Գլգան, Սագուրամօ, Աւճալ և Նախտար գիւղերում հայ քահանայ չկայ: Հաղորդութեան կարօտ են խեղճ վիրաբուս հայերը և նրանց երեխաները մկրտում են վրաց քահանայի ձեռքով: Եօթը տարուց աւելի է, որ «Նոր-Դար»ն ում անկ է նորա ուշադրութիւնը հրաւիրել է այդ ցաւալի դրութեան վրայ, բայց ոչինչ չէ եղած. մեզ մխիթարել են նրանով, որ մամուլի մէջ գրել են թէ ամէն բան բարեկարգ վիճակի մէջ է:

— Երևանից ստացած մի քանի մասնաւոր հեռագիրներից խմանում ենք, որ մարտի 21ին Երևանի թեմի կողմից

ընտրուել են ձայների մեծամասնութեամբ Ռուբէն Զալալեանը և Վարդան Եղիազարեանը:

Առաջինն ուրեմն պատգամաւոր է, երկրորդը նորա փոխանորդ: Երկուսն էլ ուսումն առած և երկար տարիներ յայտնի են իբրեւ հասարակական գործիչներ: Անտարակոյս դրանք էջմիածնին աւելի մօտիկից հանաչելով գիտեն թէ այսօր ինչպիսի եկեղեցական պէտք է և կարեւոր է, որ բազմի Լուսաւորչի հաստատած Գաշի վրայ: (ՆՈՐ-ԴԱՐ)

— Ամեն. Տ. Մեղիսեզեկ Սրբազան Արքեպիսկոպոս Մուրատեանց այսօր կանանց յատուկ Ս. Պատարագ կը մատուցանէ Գաթըն-գիւղի Ս. Թադաւոր եկեղեցին, սպասարկութեամբ Կեսարիոյ Առաջնորդ Գեր. Տրգատ և Քարակէօմրիկի եկեղեցւոյն Քարոզիչ Գեր. Եղնիկ Քալաքճեան վարդապետաց և տեղւոյն քահանայից դասուն:

— Անցեալ անգամգրեցինք թէ Բաբերդի թեմէն Կաթողիկոսական ընտրութեան մասնակցելու համար եկեղեցական պատգամաւոր ընտրուեր է Արթ. Տ. Աշոտ քահանայն: Ս. Պատրիարք Հայրը բեկանեց է այս ընտրութիւնը, ըստ որում Առաջնորդը իրենք են եկեղեցական պատգամաւոր կամ իրենք իրենց կողմանէ կը կարգեն փոխանորդ, եթէ անձամբ չպիտի երթան էջմիածին:

— Բազմավէպը հաղորդում է որ Հ. Ալիշան մի նամակ է ստացել գաղղիացի ուսուցչապետ Կարրիերից, որ հաղորդում է թէ իւր ձեռքն է անցել այժմ մի պապիրուս ձեռագիր, որի վրայ 27 տող գրուածք կայ հայերէն տառերով: Այդ գրուածք հաւանօրէն Զ. կամ է. դարուցն է. նորա բովանդակութիւնը յայտնի չէ դեռ ևս: Պ. Կարրիերի կարծիքով այդ գրութեան լեզուն յունարէն է, իսկ տառերը հայերէն: Այս գիւտն եթէ հաստատուի, մեծ գրագիտական (Paleographique) նշանակութիւն կ'ունենայ, որովհետեւ ցարդ մեզ յայտնի Հայ գրչագրերից ամենահինն հազիւ Թ. դարու գործ է. նրանից առաջ հայ գրերի ունեցած ձեւերն անյայտ են մեզ:

— Ս. էջմիածնայ ձեմարանաւարտ Պ. Ա. Տէր-Միքայէլեանը որ ուսանում էր անտոնովաբանութիւն Ենայի համալսարանում, փետր. 13ին յաջողութեամբ պատմութեան դօքտօրի քննութիւն է տուել: Դօքտօրութեան աստիճանն ըստ տանալու համար նա ներկայացրել է մի կարեւոր երկասիրութիւն:

(Ս.ՃԱՊԱՆԳ)

— Քարակէօմրիկի Ս. Օհան Ոսկերեան եկեղեցւոյ քարոզիչ Գեր. Եղնիկ վարդապետ Գալաքճեան հանդերձեալ է կանանց յատուկ Ս. Պատարագ մատուցանել յիշեալ եկեղեցւոյ մէջ յառաջիկայ հինգշաբթի օր, 16/28 ապրիլ:

ՍՈՒՐԲ ԹԱՐԳՄԱՆՁԱՅ ՎԱՆՔ

ՄԵՐԶ Ի ԳԱՆՁԱԿ

Գանձակայ դատաւի մէջ 5րդ դա-
րուն ի ժամանակի հայկական տառից
հեղինակ Մեծն Մեսրոպիայ վարդա-
պետին, հիմնուած է Ս. Թարգմանչաց
վանքն, որոյ առաջին նորոգութիւնն
եղած է 1029 թուականին. իսկ վերջին
վերանորոգութեան և ամայացեալ Ս.
Տաճարի բարեկարգութեան թուականը՝
հանդերձ տնտեսական, դպրոցական
և կալուածական բարեկարգութեամբ՝
կ'սկսի 1872ին՝ նախաձեռնութեամբ և
խնամակալութեամբ Պարոն Ներսէս Տէր-
Ներսէսեանց:

Ի մէջ այլոց Ս. Թարգմանչաց վանքն
ունի մի մագաղաթեայ Աւետարան՝ ձե-
ռագիր 6րդ դարու, և ճիւղ մատենա-
դարան, որ հետզհետէ աւելի հարըս-
տանալու վրայ է:

Երբ որ կովկասեան դպրոցները փակ-
ուեցան Ռուսոյ կառավարութեան կող-
մանէ, նոյն վանուց դպրոցն ևս փակ-
ուեցաւ, բայց այժմ խաչակաւ, Բա-
նանց, Փիւ, Չովբառ և ուրիշ շրջակայ
գիւղերէն մեծահասակ քահանայացու-
ներ կուգան հոն, և կը պատրաստուին
վանուց Հայր բարեշնորհ ծերունազարդ
Շիրակունի Տ. Թէոդորոս վարդապետի
խնամոց ներքեւ:

Ամեն. Տ. Մեղիսեդէկ Արքեպիս-
կոպոս՝ ի քաջալերութիւն իւր վաղա-
ժանօթ ազնիւ բարեկամին և հայրե-
նակցին, որ սոյն պատմական վանուց
վերանորոգութեան բազմաջան աշխա-
տաւորն եղած է, պարտք համարած էր
քանիցս խրախուսական թղթեր յղել,
և վերջերս զրկած է նաեւ Պօլսոյ մէջ
ճարտար Հայ արուեստագիտի մը ձե-
ռամբ պատրաստուած Սկիհի ընտիր
ծածկոց (1) մ'ոսկեհուռ, գործածուելու
համար տօնական հանդիսական առուրց
մէջ, և մանաւանդ Ս. Սահակայ և Ս.
Մեսրոպիայ մեծահանդէս Տօնին առթիւ:

Ազնուաշուք Տէր-Ներսէսեան՝ սոյն
ճարտարագործ ծածկոցն ստանալով՝

(1) Հայոց գլխաւոր ուխտատեղեաց
կամ հռչակաւոր վանուց մէջ, ինչպէս
յէջմիածին, յերուսաղէմ, յԱղթամար,
ի Լիւմ, ի Կտուց-անապատ, ի Սեւան,
ի Ս. Կարապետ, ի Վարդգ, ի Նարեկ
և յայլուր, տեսած չունիմ այսպիսի ճար-
տարագործ և նրբահիւս ծածկոց մը,
բաց ի Վասորի Եփեսիցի Ս. Աստ-
ուածածնայ եկեղեցւոյն ունեցած Սկիհի
ծածկոցէն, որ լրթագոյն պոլիստեմի
վրայ ոսկեհուռ և մարգարտայեռ ա-
նեղնագործուած է, կեդրոնը՝ Գառն
Աստուծոյ պատկերաւ: Սոյն ծածկոց
նուիրուած է ձէգայիլեան Մկրտիչ Ա-
միրայի կողակից՝ բարեպաշտուհի Սըր-
բուհի հանրմէն:

գործութեամբ ցոյց տուած է Գանձակի
նշանաւոր ազգայնոց, մանաւանդ ազ-
նիւ Տիկնանց, որոնք զմայլմամբ գիտած
են, վասն զի այդպիսի նուրբ ձեռա-
գործ հրաշակերտներ՝ մի միայն ի Պօլս
կը պատրաստուին, ուր շատ յառաջ գը-
նացած է այս արուեստական ճիւղին
մասնագիտութիւնը:

Իսկ Ազնուաշուք Տէր-Ներսէսեան
այնչափ գոհ մնացած է, որ ի Բագու և
ի Տփղիս ունեցած ուղեւորութեան մէջ
իւր հետ առնելով ծածկոցն, ցոյց տը-
ուած է մեծատուն բարեպաշտ անձանց,
որոնք զանազան նուէրներով մասնակից
եղած են նոյն վանուց յառաջագիտու-
թեան:

Յիշեալ Սկիհի ծածկոցի յիշատակա-
գիրն է հետեւեալը՝

ՅԻՇԱՏԱԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՁԱՅ

ՌԻՏԻՆ ԱՆՁԱԿՅՐԵԱՑ

ՅՕՂՈՎ ԱՐՏԱՍՈՒԱՑ

ՄԵԼՔԻՍԵԴԵԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱՏԵԱՆՑ

Ապրիլ, շատ ապրիլ՝ Տէր-Ներսէս-
եանց, որ գիտցաւ անվատ պայքարիլ
ժամանակին յարուցած խռիւրուն և
խուժերուն դէմ, և նորոգել ու վերըս-
տին հռչակել շուրջ 1500 տարւոյ վան-
քի մը անունն, որ գրեթէ անյայտու-
թեան և անյիշատակութեան մատնուած
էր երբեմն մեծահռչակ վանօրէից նը-
ման, որք ի գաւառն Գանձակի, ի Սիւ-
նիս, և նոյն իսկ Երեւանեան վիճակին
մէջ:

Ա. Յ. ԱՅՎԱԶԵԱՆ

ԲԱՐԵՓՈՒԹԻՒՆՆԵՐ

«Նոր-Դար»ի մի նկատողութիւնից
ընթերցողներն արդէն գիտեն, որ էջ-
միածնում հրատարակուող «Արարատ»
ամսագիրը դադարել է Մայր Աթոռի,
հետեւաբար ազգային եկեղեցւոյ օրգան
լինելէ:

Եւ այդ փոփոխութեան վրայ ցաւ
յայտնելու տեղ մեզ կամեցան մխիթա-
րել նրանով, որ յայտնեցին ի գիտու-
թիւն աշխարհի, թէ «Արարատ»ը բա-
րեփոխուել է և զայն ղեկավարողը առ-
խարհական միաբան՝ Գալուստ անունով
տիրացուն է:

Ընթերցող հասարակութիւնը շատ
չուտով վայելեց այդ բարեփոխութեան
պտուղները:

«Արարատ»ի յուշուար ամսի տետրի
երեսից անհետացել է մեր ազգի Սըր-
բութեան պատկերը, մեր ազգի պար-
ժանք Ս. Էջմիածնի պատկերը և դրա
տեղ դրուել է մի ինչ որ չի նուիրուած

պատկեր, որ նէտք է շեմարանինը լի-
նի: Հենց այդ պատկերի տակ շարունակ
է Թոնդրակեցիների աղանդի փառա-
բանութիւնը և այդ աղանդի դէմ կըռ-
ւողների՝ Հայաստանեայց ուղղափառ
եկեղեցւոյ պաշտպանների դատապար-
տութիւնը:

«Նոր-Դար»ի ընթերցողները ծանո-
թացան անշուշտ՝ մեր աշխատակից Մու-
րացանի յօդուածով՝ Թոնդրակեցիների
աղանդի և «Արարատ» ամսագրի մէջ
մտցրած նորամուծութեան հետ:

Եթէ այդ բարեփոխութիւններն այ-
սօր կատարուած իրողութիւն չլինէին,
— մենք ո'չ մի կերպ չէինք կարող հա-
ւատալ, որ Մայր Աթոռում կարող է
այդ ամենը տեղի ունենալ:

Զանազան հաւատարմ միաօնարական
ընկերութիւններ արեւելքում մեր աղ-
գային եկեղեցւոյ դէմ գործելով, իրենց
մոտաւոր և նիւթական ահալին միջոց-
ներով չէին կարող, յաջողեցնել և գլուխ
բերել այն, ինչ որ եղելութիւն է այսօր
չնորհիւ մի աշխարհական արեղայի:

Որ այդ ամէնը կատարուել է և կա-
տարուում է էջմիածնում և էջմիածնից—
դա այնպիսի մի երեւոյթ է, որի նմանը
ոչ մի ազգի եկեղեցւում չենք գտներ:

Փառաբանել Թոնդրակեցիներին,
հեռացնել էջմիածնի միաբանութեան
օրգանի ճակատից էջմիածինը և նորա
տեղը դնել շեմարանի պատկերը — դա
գայթակղեցուցիչ է:

Թիֆլիսի բոնդրակեցիներն արդէն
տօնեցին այդ բարեփոխութիւնը, ամէն
տեղ բացատրելով որ առաջին տեղը
գիտութեան է պատկանում, եկեղեցին
երկրորդ պլանի վրայ է:

Այդ բարեփոխութիւնների վրայ հը-
րաւիրելով ամբողջ ազգի ուշադրու-
թիւնը, մենք առիթ կուենենաք խօսե-
լու առաջիկայում այն ուղղութեան վը-
րայ, որ բարեփոխուած «Արարատ» ամ-
սագիրը բռնել է ազգիս մէջ անկախ և
միշտ Հայաստանեայց եկեղեցւուն հաւա-
տարիմ մնացող մամուլի դէմ, յօդուտ
այդ եկեղեցւոյ դէմ գործող մամուլի:
ՆՈՐ-ԴԱՐ

ԵՐԶԱԳԱՆԳ ԹՈՒՍԱՀԱՅՈՑ ՄԵՄՈՒԼԵՆ

«Սիմոն Գաբամանեանի Հայերէն լեզուի
բառարանին նկատմամբ»

Վաղուց է, որ գգացում է Հայերէ-
նից հայերէն մի այնպիսի բառարանի
կարիք, որի մէջ մտած լինէին նոր բա-
ռերը, որ բաւականութիւն տար աշ-
խարհաբար լեզուի համար: Վենետի-
կեցւոյ «Առձեռն» բառարանի մէջ մըտ-
նում են միայն գրաբարի բառերը, ո-

րոնք գործ են ածուել մեր հին մատենագրութեան մէջ. բաց ի այդ, «Առ-ձեռն» բառարանը, գրաբարի ուսման համար նշանակուած լինելով, շատ քիչ պիտանի կարող է լինել աշխարհաբարի ուսումնասիրութեան համար, մանաւանդ այն մարդկանց ձեռքին, որոնք գրաբար չգիտեն: Այժմ Կ. Պոլսում Սիմոն էֆ. Գրաբարաձեռնի խմբագրութեամբ լոյս է տեսնում «Հայերէն լեզուի նոր բառագիրք», որ պիտի բաղկանայ 40—45 թերթերից, և առայժմ հրատարակուել է մինչև 35րդ թերթը: Այդ նոր բառարանի մէջ պիտի բովանդակուին 30,000 բառեր, ոճեր, նորաբանութիւններ, գաւառական, արհեստական, դիցաբանական, ևայլն բառեր: Գրաբարի բառերից այդ բառարանի մէջ մտնում են ամենից գործածական բառեր ու ոճերը՝ ի հարկին իրենց նոր առումներով ու համանշանակներով: Կազմողն օգտուել է բաց ի ուրիշ հայերէն բառարաններից, գլխաւորապէս Նորայր Բիւզանդացու Փրանսերէնից հայերէն ընդարձակ բառարանից, Նոյնպէս և ուրիշ նոր հրատարակութիւններից. բաց ի այդ, հեղինակն այդ բառարանի մէջ մտցրել է և ուրիշ բառարաններից դուրս գտնուած մի քանի հազար բառ, բառարանի մէջ նըշանակուած են շատ բառերի արմատներն ու նրանց սծանց և բարդ բառերն:

Մ Ա Ղ Ն Ի Ս Ա

Միջերկրականի Չմիւռնիական ծոցի Արեւելեան ափանց կողմէն դէպ ի ներս սողոսկող Հիւմոս գետի ոլորտապտոյտ հոսանքն ի վեր 60—70 քիլոմէթրաչափ յետս ընդարձակ և լայնածաւալ դաշտ մի կը ծփայ՝ ծառաստաններով և այգեստաններով, պարտէզներով և անդաստաններով պնդադարեալ. առողջարար օդ մի պատած և պարարած է իւր մթնոլորտն և համակ կեանք, համակ երջանկութիւն կը սփռէ ամէն կողմ: Այս համատարած դաշտի հարաւակողմն ամրակուռ կը բարձրանայ Լիմպոլեան՝ իւր դարաւոր վեհութեամբ, որ երկարած գոլած է արեւելքէն արեւմուտք, և իւր կոնաձև գագաթն ծրարի յամպըս: Այս յաղթապանծ լեռան ճիշդ կողերուն վրայ՝ արեւելքէն արեւմուտք՝ գեղաժպիտ ի տես կուգայ Մանիսան իւր հոգակաւոր Ուլու, Մուրատիյէ և Սուլթանիյէ գեղեցկակերտ մզկիթներու հիւսքանց տեսարաններով: Մաղնիսան հնութեանց չեղձակոյտ մի է գրեթէ, սակայն ցաւալի է որ շատ ցանցառ տեղեկութիւններ կը տրուին նորա անցեալի մասին: Թէև այժմ չունի կարե-

ւոր դիրք քաղաքակրթեալ աշխարհին մէջ, սակայն ի հնումն թատր եղած է շատ նշանաւոր իրողութեանց որոցմէ մաս մը դեռ ևս իբր աւանդութիւն կը յեղյեղուն ժողովրդական կենդանի պատմութեան մէջ: Դեռ 100—150 տարի առաջ Մաղնիսան օրօրանն էր Օսմանեան հարստութեան պայազատներու և գահաժառանգներու: Քաղաքին՝ այս լեռան գրեթէ 100—120 մէթրո բարձրութեան վրայ՝ ամբողջ լեռան երկայնութեամբ տակաւին տեղ տեղ կանգուն կը կենան վիթխարի բերդերու բեկորներ, ինչպէս նաև քաղաքին ծայրը դէպ ի հարաւ բարձրադիր պալատի մը սակաւ ինչ եղծեալ մնացորդը՝ զոր քաղաքապետութիւնը նորոգել տալով սակէ 4—5 տարի առաջ՝ առանց սակայն իւր հնութիւնը եղծելու, պահապան մը դրած է անդ, ընդունելու համար հետաքրքիր այցելուններն: Թէ՛ ասոնք և թէ՛ քաղաքի մէջ գտնուած ուրիշ այլ և այլ հնութիւններ ձենովական հարստութեան կը վերաբերին. այսօր կը վկայեն երբեմն հնական արձանագրութիւններ: Ոչ նուազ, այլ իրական հետքեր և աւանդութիւններ ևս կ'ապացուցանեն թէ Մեծն Աղէքսանդր ապրած է այս հողին վրայ և Աքիլիսայ երգչի դիւցազանց մեծ մասն հոս վարած են իւրեանց դիցաբանական կեանքը: Դեռ վերջին տարիներս քաղաքէն մէկ ժամ հեռաւորութեամբ դէպ ի արեւելք պեղուեցան հնութիւններ՝ որք Մեծն Աղէքսանդրի կնիքը կը կրէին, զորս գրաւեց կառավարութիւնը: Կայ աւելի կենդանի վկայ մի ևս հին պատմութենէն՝ որ քանդակուած է Մաղնիսայի լեռան արեւելակոյս կողման վիթխարի ժայռի մը վրայ, քաղաքէն 2 ժամ հեռաւորութեամբ. դա մարդու պատկեր մի է անգլուս. զանց ընելով ոմանց կարծիքը այդ մասին թէ այն Նէէմիայ դիցուհւոյն սլատկերն է. մեքյառաջ կը բերեմք ժողովրդեան մեղ բերած կենդանի աւանդութիւնը, ըստ այնմ թէ դա քահանայ մի է որ իբր պահպան կը հսկէ քաղաքին վրայ և թէ նորա հայեացքի կեդրոնն անսպառ գանձ կայ պահուած: Քաղաքի ընդարձակածաւալ դաշտին մէջ կան միմեանց խիստ մօտիկ գիւղեր, որոց մէջ պատմական տեսակետով նշանաւոր կը համարուի խոռոզ քէօյ ըսուած գիւղն: Աւելորդ չեմք համարիր ի հրապարակ հանել և այս գիւղի մասին ժողովրդեան առասպելաւ պատմութիւնն, ըստ այնմ թէ ի հնումն խիստ գիտնական ճարտարապետ մը կը հրաւիրուի երկրին իշխանին կողմէն կառուցանել այնպիսի հոյակապ շէնք մը որ միակը լինի աշխարհի մէջ. ճարտարապետը

տը թէև առահի հաւանութիւն կուտայ և կը խոստանայ շինելու, սակայն տեսնելով որ անկարելի պիտի լինի գոհացնել իւր տէրը և հետեւութիւնը իրեն մահուան պատճառ պիտի լինի, կը խորհի ճարտարութեամբ մ'ազատիլ իւր տիրող ձեռքէն, ուստի և մէկ կողմէն այդ շէնքը շինելու կը ձեռնարկէ և միւս կողմէն իրեն տախտակեայ թեւեր կը շինէ, զոր և շինելուն պէս՝ այդ շէնքի քարձուկէն կ'սկսի փախչիլ արագաթռչ. զայս երբ կը տեսնէ ժողովուրդն, կ'սկսի քարեր և նետեր վերառաքել առօդաչու ճարտարապետն մեր՝ որ առահի կը սահեցնէ ձեռքէն իւր ուրազն՝ որ կ'իյնայ այդ վայրն, ուր յետ սակաւուց ի յիշատակ այդ խորիմաստ ճարտարապետին կը հիմնեն գիւղ մը և կ'անուանեն զայն Խոռոզ քէօյ:

Մեք երբ կը լսեմք ժողովրդեան այս աւանդութիւնը, ակամայ կը յիշեմք սորա յար և նման դէպք մը զոր կ'աւանդէ մեզ դիցաբանական պատմութիւնը՝ յանձին Տիտալոս ճարտար արձանագործին Աթենի՝ որ անուանի էր թէ շարժուն արձաններ կը շինէր: Այս անձ նախանձելով թոռան՝ դաւով մը կ'ըսպաննէ զնա և իւր որդւոյն Իկարոսի հետ կը փախչի ի Կրետէ և անդ կը հիւրընկալուի Մինովս արքայէն՝ որոյ հըրամանաւ կը շինէ նշանաւոր բաւիղն, իսկ երբ պատճառաւ մը կ'ուզէ մեկնիլ Կրետէէն, Մինովս կը բանտարկէ զնա այդ բաւիղն մէջ: Տիտալոս հոն կը շինէ մոմեայ թեւեր իրեն և իւր որդւոյն Իկարոսի համար, և թռչելով կը փախչին, սակայն Իկարոս արեգակին խիստ մօտենալով, կը հալին իւր մոմեայ թեւեր և կ'իյնայ ի խորս ծովուն: Ինչպէս կ'երեւի, հաւանական է թէ ճիշդ այս դէպքը դարուց ընթացքին մէջ ժողովրդեան բերանին մէջ ծամուելով տարբեր գոյն և կերպարանք առած է և նոյն այդ Իկարոսը պէտք է ինկած լինի այդ վայրը և որոյ անուամբ պէտք է կառուցուած լինի այդ գիւղը: Եւ Իկարոս անունը հետզհետէ մաշուելով ժողովրդոց բերանին մէջ, կարոս, խարոս և հուսկ ուրեմն նշանակութիւն մը բերել յարմարեցնելու համար խոռոզ ըսուած է, մինչդեռ այդ գիւղին մէջ ո'չ շատ խոռոզ կայ և ո'չ ալ խոռոզի վրայ պատմութիւն մը:

Մաղնիսան իւր այսքան պատմական հարստութեան յետոյ այժմ խիստ համեստ վիճակ մը ունի: Վերջին վիճակագրութեանց համաձայն 35—40,000 բնակիչ ունի, իւր վաճառականութիւնն է չամիչ, ցորեն, բամպակ և խոզկաղին: Վերջերս առաւել ընդհանրացած է այգեգործութիւնը և աղէկ այգիի մը արտադար կը ծախուի մինչ 35—40 Օսմ. ոսկւոյ: Հասարակութիւնն այնքան հե-

տամուտ է այժմ այդեզործութեան՝ որ շատ բարեբեր և նշանաւոր արտեր այգի եղած են և քաղաքիս շրջակայքն մինչ 2-3 ժամ հեռաւորութեամբ այգիներ տնկուած են. անդ կը շինեն հիւղեր և խրճիթներ ուր կ'երթան բնակիւ ընտանեօք, սկսեալ յունիսէն մինչեւ ցհոկտեմբեր. Հրապուրիչ է սակայն այդ կեանքն, ցի այդ տեղեր թէ՛ քրկան աղբիւրներ, սակայն կը պեղեն ջրհորներ որ պաղպաղուն ջուրեր ունին: Այդ տեղերուն օգն հովասուն է և հաճոյական. քանի՜ քաղցր է կեանքն այն այգեգործին՝ որ յետ մտիցն արեգին, ամառնային տօթէն պարտասեալ՝ կը մեկնէ փախթն սաղարթազարդ որթերու ծոցին մէջ՝ որոց թերթիկներու վրայէն սողոսկելով արեւմտեան քաղցրաշունչ գեղիւն կենսաւէտ՝ կ'երթայ մեղմիւ կը համբուրէ թալկացեալ թուշերն վաստակաբեկ մշակին և զայն կ'ողորմէ ու վերածնէ: Զի՞նչ քաղցր է լսել զուարթ սոխակներու սիրազեղ գեղգեղումներն և հազարաւոր երգեցիկ թռչնոց գիշերային ողբաձայն դայլայիկներն դիւթական, որք մերթ ընդ մերթ կ'ընդհատուին ողկուզալից ուռերու յամրաշարժ տերեւոց խուռ շնկոցներէն և որք գոգցես կատակներ կ'ընեն՝ մերթ մեղմիկ ապտակներ գետեղելով իւրեանց գորովալիւ տիրով այտերուն: Ահ, քանի՜ ոգեպարար և հոգեզմայլ կը լինի մանաւանդ այն սքանչելի տեսարանները գիշերաց թագուհին կուգայ և կը բարձրանայ թագաւորել երկնային փառայեղ աթոռին վրայ, որ կ'ողորմէ և կը պարարէ ընդհանուր տիեզերքը իւր ոսկեգոյն և զովաշունչ ճառագայթներով. աստ է ահա՜ երջանկութիւնը. աշխարհային փառքեր և վայելչութիւնք չեն կարող հաւասարիլ բնութեան առթած այս սքանչելագործ վայելից և հաճոյից՝ որ անխտիր կը շնորհին թէ՛ հարուստին և թէ՛ աղքատին, թէ՛ բարեբաղդին և թէ՛ թշուառին առհասարակ, և որ կրկին առաւելութիւն մը ունին, այն է կցել գերկիր ընդ երկինս և Աստուածային սքանչելիքներն հաշակել: Մաղնիսացին ուրեմն իւր ներկայ համեստ դրութեան մէջ գոհ է իւր վիճակէն ուր կը տեսնէ իւր ներկայն ու ապագային համար առաւել երջանկառիթ խոստումներ կ'ընէ իւրայնոց, և իւր այս դրութեան մէջ իսկ կրնայ պարծիլ թէ ինք հին երկիր մի է, թէ ինք եղած է սնուցիչն հնապատմական անձնաւորութեանց և տակաւին կը պարուռնակէ իւր մէջ այնպիսի գաղտնիքներ որ թերեւս առատ նիւթ և լոյս մատակարարեն հնախոյզ և հետաքրքիր գիտնականաց:

Ա Ր Բ Ա Կ

10 մարտ 1892

Մաղնիսա

ԹՈՆԴՐԱԿԵՑԻՈՅ ԱՂԱՆԴԻ ԱՌԹԻԻ

Ուշագրութեամբ կարդացի սիրելի Մուրացանի դիտողութիւնը Թոնդրակեցւոց աղանդի մասին ի պատասխանի էջմիածնայ մի Միաբանի «Արարատ» մէջ հրատարակած յօդուածին: Խիստ հետաքրքրական էր:

Միայն ախոս, որ նա իւր դիտողութեանց համար առանձնապէս օգուտ քաղեր է մեր պատմագիրներէն, որոնք հազիւ թէ կարող են բարձրացնել այդ աղանդի վրայ փռուած պատմական վարագոյրը և պարզօրէն ցոյց տալ այդ մոլորութեան էութիւնը:

Բոլորովին ուրիշ բան կը լինէր, եթէ յարգելի Մուրացանն օգտուէր այդ մասին այսօրուայ պատմագրական գիտութեան խուզարկութիւններէն, որոց սփռած լոյսով պիտի կարողանար աւելի պարզութեամբ ցոյց տալ որ Թոնդրակեցւոց աղանդը, որպէս շարունակութիւն Պոլիկեան աղանդի, ոչ այլ ինչ էր եթէ ոչ մի հակառակութեամբ հետ: Այս աղանդաւորը կ'ուզէին իբրեւ թէ վերադառնալ սկզբնական եկեղեցւոյ կազմակերպութեան, իսկ և իսկ բողոքականութեան մէջ տեղի ունեցած «Ազատ համայնք» կոչուած աղանդներու կազմակերպութեան:

Այս աղանդի մոլորութիւնք եթէ միայն բուն կրօնի սեպհական և սահմանի մէջ՝ անշուշտ հազիւ թէ իրենց դէմ յարուցուած հակառակութիւնը կը հասցնէին հալածանաց այն աստիճանին, ինչպէս կը տեսնենք ժամանակագրութեանց մէջ: Բայց բանն այն է, որ նոքա իրենց մոլորութիւնները տեսական սահմանէն դործնական կեանքի մէջ մտցնելով՝ իրենց ծայրայեղութիւններով վտանգի մէջ դրած էին հասարակական կեանքի գոյութիւնը: Դոքա նոյն ժամանակի անթիսանակաճանճէն, այսինքն անաբիստները, որոնք իրենց մոլորանքութեան մէջ խիղճ չէին ըներ մինչև իրենց բնավայրին դէմ դաւել և նոյն իսկ քրիստոնէութեան արիւնարբու թշնամեաց՝ սարակինոսներու՝ զինակից լինել: Այս էր պատճառ, որ այս աղանդի դէմ մաքառելու համար միացեր էին երկու անհաշտ բանակներ՝ կեսարականներն և կղերականները: Դոքա դէմ էին մինչև անգամ պատկերամարտ կայսերք, թէ՛ և ըստ երևութիւն՝ սոցա քաղաքական շահուց ու թեկնածութեանց շատ ձեռնտու պիտի համարուէին տարածուող աղանդի դիտումները, նկրտումները: Յոյնք թէ՛ և այս աղանդը «արմենական» կը կոչէին, բայց

այս անուանումը ցոյց կուտար նոցա ատելութիւնը դէպ ի այդ աղանդը: քան թէ սորա ծագումը (Յոյնք այն ժամանակ կ'ատէին զՀայս): Եւ այսօր մի պատմաբան չէք գտներ որ դորա ծագումը հայութեան վերագրէ: Այո՛, կ'ըսեն թէ այդ աղանդն առաւելապէս տարածուած էր արեւելեան թեմերու մէջ, բայց ծնունդը, կ'ըսեն, Ասորոց Միջագետքէն էր: Յոյնք առ հասարակ տրամադիր էին բոլոր աղանդաւորներն Հայ անուանել. օրինակ՝ Արիօսն ալ «արմենիօս» կը կոչէին. բայց մի՞թէ այդպէս է: Յոյնք մի ազգային տօն կը հաստատեն, եթէ լսեն որ մի հայ, այն ևս Ս. էջմիածնայ միաբան, Մայր Աթոռոյ պաշտօնական թերթի մէջ Պոլիկեան աղանդի ծագման «պատիւը» Հայու մտածողութեան յատկացուցած է:

Պոլիկեանց մասին գրած են ժամանակակից պատմագիրք՝ Պետրոս Սեկերացին և Ֆոտիոս անուանի պատրիարքը:

Յամենայն դէպս՝ եթէ մեր լուսնոս առաջադիմականութիւնը կամենայ այս պատմական տխուր իրողութենէն օգուտ քաղել նոր ու քաւմ առաջադիմական գաղափարներ արծարծելու համար, այն ժամանակ հարկ է նայիլ և օտար դրականութեան աղբիւրներու: Ռուսաց դրականութենէն կարելի է օգտուիլ՝ անգլիացի Ռոբերտսոնի հարուստ և միևնոյն ժամանակ բաւականին լուրջ «Ընդ. եկեղեց. պատմութեան» թարգմանութիւնը և մի քանի յայտնի բրօֆէսէօրներու ախաղեմական ճառախօսութիւնները կարդալով:

Իսկ ինչ կը վերաբերի այն հայեացքին, թէ Արեւմտեան կրօնական յեղափոխութիւնը՝ Պոլիկեանց վարդապետութեան շարունակութիւնն էր և բողոքական պատմիչներու կարծիքով՝ դոքա անմեղ մարտիրոսներ էին, — այս կարծիքի հեղինակն եղած է առաջին անգամ Գիւթոն՝ հակաքրիստոնէական ոգւով զառածուած անգլիացի պատմաբանն՝ իւր ընդարձակ գործի մէջ:

(Նոր-Դար)

ԲԺ. ԱՐԱՄԵԱՆՅ

Աւարտած է տպագրութիւնն Սիմօն էֆէնտի Գաբամիսճեանի ՀԱՅՏԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ ԲԱՌԱՐԱՆԻՆ:

Մէն մի օրինակն, ընտիր լաթակազմ, կը ծախուի Պոլսոյ համար 15, իսկ գաւառաց համար 18 դրուչի:

Կեդրոնատեղի՝ Կ. Պօլիս, Հաճօբուլօ խան, թիւ 29 վաճառատունն:

ԱԶԴ. «ԾԱՂԻԿ»

Կը խնդրուի մեր այն գաւառացի ընթերցողներէն որոնք պարտք ունին բաժանորդագրութենէ, հաճին փութացնել իրենց վճարումներն:

ԲԱՐՁՐ ԳԼԽԱՐԿՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Երկայն գլխարկը տարբեր կերպիւ «ծխնելուզի թագ», «վառարանի խոլովակ», չգլխեմ դեռ ինչ կոչուած, նորաձևութեանց կարգն անցաւ ի Բարիզ 1790ին՝ Ֆրանքլինի մահէն անմիջապէս յետոյ, որուն ի պատիւ «Ֆրանքլինի գլխարկ» յորջորջուած էր։ Հակառակ բազում ձևափոփոխմանց, այդ օրուէն ի վեր իւր գոյութեան իրաւունքը պահած է անսպասելի յաջողութեամբ մը։ Ժամանակ մը գլխարկի այս ձևն արդիւնաւոր էր Գերմանիոյ և Ռուսիոյ մէջ, և զայն կրօնը կ'ենթարկուէր «վառարանի խոլովակ» պատժոյն։ Բայց չար համբաւը շուտով անհետացաւ, և բարձր, դաժան գլխարկը, այն ամենատեղեւ ու ծաղրելի գլխանոցն ցարդ գործածուած բոլոր ձևերէն աւելի կ'ապրի։

Միւսիքի նշանաւոր Հօքսթուզ գարեջրապարտիզին մէջ, երբ ու է մէկն համարձակէր բարձր գլխարկով երեւիլ, հաւանորէն իւր գլխուն վրայ կը ճմլուէր այն. աւանդութիւնը կը յայտնէր որ ամէն տեղէ աւելի այդ տեղ անյարմար նկատուած էր բարձր գլխարկը։

Ասոր հակառակ Անգլիական հասարակաց խորհրդարանին մէջ, և ոչ մէկ պատուարժան անդամ կը բազմի առանց երկար փնդոյրը գլխուն վրայ ունենալու։ Եթէ նա երէն ժողովին խօսելու, բարեկամ մը բարեկուտ կամ սրահէն անցնելու, պարտի ձեռքը բռնել փոյլուն «կղմիւնորը»։ Եթէ իւր անունը յիշուի ուրիշ անգամ մը բանախօսութեան մէջ, գլխարկը կը բարձրացնէ իւր ընդունելութեան նշան։

Եւրոպական բարձրամէնթներէն միոյն մէջ, երբ նախագահը պատշաճ դատէ վերջապէս խնդիր մը, ծանր ձեռով մը իւր «ծխնելուզի թագը» գլուխը կը դնէ։ Եղբայրութիւն մը որ թէ և գրեթէ 30 տարի առաջ սկստահեցաւ, բայց ժողովուրդը դեռ կը խնդայ զայն յիշելով։ Նախագահ մը ուղեւորը նշանաւոր վիճաբանութիւն մը փակել, սխալմամբ իւր դրօշակոյն գլխարկը դրաւ, որ շատ մեծ գալով իրեն, մինչև ականջները գոցեց և զինքը ժողովին բազմութեան գլխող աշերէն բոլորովին ծածկեց։

Գերմանիոյ մէջ երբ Պարոն աւագ քննիչ Ա. հանգիւլի փողոցն իւր բարեկամ Պարոն Պ. ի, տնօրէն երգեցիկ ընկերութեան, անոնց մօտէն քալող խոհեմ անցորդը բաւական անցք մը կը թողու իւր և անոնց մէջ, ապա թէ ոչ վեր բարձրացած մեծաշուք գլխարկներուն հարուածը հաւանորէն զինքը մինչև և տանիքը սրտի քշէր։

Նուազ յարձակողական, բայց նաև ուշագրաւ բան մ'է օտարականի մը համար Անգլիացոց այն նորաձևութիւնն որ եկեղեցւոյ ննտարանին մէջ տեղաւորութեան պէս իրենց դէմքը կը ծածկեն իրենց բարձր գլխարկներով։

Արաբացիք երբ ուղեն իրենց ամենախիստ անէծքն ընել, սապէս կ'ըսեն. «Թող քու հոգիդ եւրոպացւոյ մը գլխուն վրայ գտնուած գլխարկէն աւելի հանգիստ չգտնէ»։

Վերջերս Գերմանիոյ կայսեր փոքր զաւակաց ցոյց տուին chapeau-elaqueի մը կամ մեքենական բարձր գլխարկին զաւանդները։ Բիշ ժամանակ յետոյ իրենց հօր նախասենեկին մէջ երկայն գլխարկ մը դտան և ուղեցին անմիջապէս իրենց ճարպիկութիւնը փորձել զայն գոցելով։ Բայց գլխարկը պարզ տեսակէն լինելով, այսինքն ոչ մեքենական, անշուշտ ընդդիմացաւ գոցուելու։

Վերջապէս պզտիկ իշխան մը տնհամբերութեամբ ըսաւ իւր եղբորը. «Վրան նստէ, Ժրից»։ Ժրից հնազանդեցաւ և ասոր հետեւեցաւ բարձրաձայն պայթում մը և խնդալու քրքիլ մը։ Կայսրը մարդ ուղարկեց աղմուկին պատճառը հասկնալու։ Պզտիկ գահաժառանգ իշխանը զինուորական բարեւոյ մը խորտակուած գլխարկը ցոյց տալով, պատասխանեց. «Ես մտա առարկայն առաջին անգամ չուզեցի գոցուիլ, բայց մեր մէջ այնպէս մը կարգադրեցինք որ իւր միտքը փոխեց»։

Նոր մը գրուեցաւ կտորած գլխարկին տեղը որուն տէրը անշուշտ պիտի պահէ զայն իւր երկրին ապագայ պետին կենաց խիստ զուարճալի մէկ միջադէպին իւր յիշատակ մը։

Թարգմ. ԱՐԹՕ

ԿԱՏՈՒՄ ՈՒ ԿԻՆՄ

1.

Կասու ունէի կապոյս աչեքով, Զայնր անուշիկ՝ կարծես էր հնար. Աւելոյթ ու հարպիկ՝ նա իւր խաղերով Մեծ սփոփանք էր իմ սրճի համար։

Խիստ չար լինելով, մի օր էս նրան Կարգ ու կանոնի կամեցայ վարժել. Եանկարձ կասաղեց, բուռ իմ վրան, Այգ ու երեսս սկսեց պոկել։

2.

Սիրուն էր կիսն, բովիչ աչեքով, Շնորհալի հասակը չիմարի նման, Ու իւր կախարհիչ ուրախ Ժպիսով Լցնում էր սիրս սիրով անսահման։

Քաղաքավարութեամբ մի օր էլ նրա Սխալն ուղղելով մի խօսք ասացի. Կասաղեց, փրփրեց. և էս ևս ակամայ Ընսանի գազան — կասուս յիւսից։

Ա. Յ. Մ.

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Կապկաց լեզուն. — Բրոֆէսէօր կարնէ, ի նիւ Եօրք, մտադիր է կատարելագոյն սովորիլ կապկաց լեզուն, ուստի այս նպատակաւ ի մօտոյ կեդրոնական Ափրիկէ ուղևորութիւն մը պիտի կատարէ, կապկային տարբեր ցեղերու յատուկ լեզուները սովորելու համար։ Ահաւանիկ իւր խօսքերը. «Ի սկզբան, փորձերս սկսայ վանդակի մը մօտ, ուր չորս հատ կապիկ կար, զանոնք ողջունեցի արտասանելով այն բառը որ ասոնց լեզուաւ սնունդ կը նշանակէ. վստահ եմ որ զիս հասկցան, վասն զի կապիկներէն մին յառաջանալով վանդակին առջև, սիրոյ յայտնի նշաններ ցոյց տուաւ. այն բառը զոր ես արտասանեցի, կրնայ սապէս գրուիլ «նիու-ու-վ»։ Բրոֆ. կառնէ այս փորձը յաջողութեամբ ուրիշ կապիկներու վրայ ևս կատարեց։ Կապկաց լեզուն ուսման ամենամեծ դժուարութիւնը սա է թէ, գրեթէ մեզ անկարելի լինելով անոնց հնչմունքն ընել, այբուբենի գրութեամբ չկրնար գրուիլ, նաև բազմիցս բառ մը ամբողջ մի խօսք կը նշանակէ։

Քրիստոսի աստղ. — Պ. Լէօօրտ Հիւկօ այժմ կ'գրադի 1572ին Թիքօ Պըրահէյի տեսած աստղով. երեք տարի յառաջ Աւստրիացի աստղագէտ մը ծանոյց թէ՝ Պ. Պրահէյի տեսած աստղն այն էր որ Քրիստոսի ծննդեան պահուն երեք միագրեւ ի Բեթլէհէմ առաջնորդեց, աւելցնելով նաև թէ այս աստղը իւրաքանչիւր 315 տարին անգամ մը տեսնուեցաւ, հետեւաբար վեցերորդ անգամ լինելով (Քրիստոսի ծնունդէն ի վեր, 315 X 6 = 1890) պիտի տեսնուի 1891ին, Կաթոլիկ համաստեղութեան մէջ. գուշակութիւնը չկատարուեցաւ որ արդէն անհաւանական էր. գիտութիւնը ո'ւ է բացատրութիւն մը չկրնար տալ Բեթլէհէմի տարօրինակ աստղին նկատմամբ։

Դանուբի խութեր. — Դանուբ իւր բոլոր ընթացքին մէջ նաւարկելի չէ. ի մէջ Ալթ-Մօլտօվա և Թիւրն-Ալվերէնի մի քանի քիւլօմէթր երկայնութեան վրայ կը գտնուին անթիւ խութեր և ժայռեր որք մակոյղի մ'իսկ գնացքը կ'արգիլեն։ Հռովմայեցոց ժամանակ իսկ աշխատեցան այս խութերը վերցնելու։ Վերջերս Աւստրո-Հունգարական կառավարութիւնը որոշեց կատարելագոյն նաւարկելի ընել գլխունը. աշխատութիւնը սկսան, և ծախսուելիք գումարը ամբողջ 20 միլիոն կը կարծուի։

Միաց. Նահանգաց ծառեր. — Տարի մը յառաջ ի նիպարաքա ընկերութիւն մը կազմուեցաւ, ամենուրեք ծառ տնկելու նպատակն ունենալով. այս ընկերակցութիւնը այժմ միութեան 34 նահանգաց մէջ տարածուած է, և իւր անդամք 365 միլիոն ծառ տնկած են։ Աւելորդ է ըսել թէ բուսական ցեղը կը կազմէ երկրի մը հարստութեան գլուխաւոր մասը։

Թարգ. ԹԱՌՈՒԼ ՔԻԻԵԼԻՆԱՆ

Այնքայ



ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Աֆղանստանի էմիր Ապտ-իւլ-Բազման՝ ցեղապետներուն պաշտօնագրերը ուղղելով, անգլիական պաշտպանութեան օգուտները պարզեր է, հակառակ Ռուսիոյ:

— Ֆրանսայի կառավարութիւնը իրեն հակառակ կոնդակ մը հրատարակող Մանթի եպիսկոպոսին թռչակը կրտրեց: Կաթոլիկ երեսփոխանը և ծերակուտի անդամը հանգանակութիւն մը բացին իրեն ի նպաստ:

— Տահմուէի պատերազմը չորս ամսէն պիտի սկսի, օրովհետեւ հիմա անձրեւի եղանակն է: Առ այժմ նաւահանգիստը պիտի ամրացնեն:

— Շուէթի Օսկար Բ. Թագաւորը կողորդի հիւանդութենէ կը տառապի:

— Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Պ. տը Կիրսի վիճակը դեռ ծանր է: Իսկ ելեւմտից նախարար Պ. Վիշնէկրաձը բաւական լաւացած է և Կայսրը երկար արձակուրդ մը շնորհած է իրեն իւր առողջութիւնը դարմանելու և օգտախոսութեան երթալու համար: Իւր պաշտօնը առժամապէս պիտի վարէ Պ. Թէօրնըր:

— Իսպիա նախարարական տաղանապ մ'անցուց: Պատերազմական և ծովային գործոց նախարարը նոր վարկեր խնդրեցին որք բացարձակ կերպիւ մերժուեցան նախարարապետին և արքունի գանձուն նախարարին կողմէ: Առաջինը պնդեցին և այսպէս տաղանապ սկսաւ: Տի Ռուսիոյ մարքիզը մեծ ջանքերով նոր նախարարութիւնը կազմեց երեքշաբթի հետեւեալ կերպիւ. Պ. տը Ռուսիոյ նախարարապետ և արտաքին գործոց, Նիքօթէրա՝ ներքին գործոց, Լուճճաթի՝ արքունի գանձուն, Բատօլինի՝ ելեւմտից, Պրանքա՝ հանրօգուտ շինութեանց, Ռիչիեօթի՝ պատերազմական գործոց, Սան Պոն՝ ծովային գործոց, Ճենալլա՝ կրթութեան, և Բեմիրի՝ դատական գործոց նախարար: Նոր նախարարութիւնը պատերազմական ելմտացոյցէն խնայողութիւններ ընել խոստացած է:

— Միացեալ-Նահանգաց և Իտալիոյ կառավարութեանց միջև տարիէ մ'ի վեր բանակցութեանց նիւթ եղող Նիւ-Օրլէանսի խնդիրը վերջապէս կարգադրուեցաւ և դեսպանական յարաբերութիւնք, որք այդ առթիւ խզուած էին, վերսկսան: Միացեալ-Նահանգք 125000 Փր. պիտի վճարեն Իտալիոյ՝ Նիւ-Օրլէանսի մէջ Լինչի օրինօք սպաննուած Իտալացւոց ընտանեաց տրուելու համար:

— Միացեալ-Նահանգաց և Քիլի

միջեւ դիւանագիտական յարաբերութիւնք դեռ եւս դադարեալ կը համարուին:

— Իսպիոյ մէջ պաճարախոտ ծագած լինելուն համար Ֆրանսայի երկրագործական նախարարն արգիլած է իտալական արջառաց մուտքն:

— Նոր Հանրապետիւն մ'ալ հաստատուեցաւ Հարաւային Ամերիկայի մէջ: Պրէզիլիոյ մէկ մասն եղող Մաթթօ Կրօսսօ դաւառը բաժնուելով երկրին մնացեալ մասէն, ինքնուրոյն կառավարութիւն կազմեց Պարագոյ գնդապետին նախագահութեան ներքեւ: Այս նոր Հանրապետութեան դրօշակը կապոյտ ու կանաչ է, մէջ տեղը դեղին աստղով մը:

— Հունգարիոյ կառավարութիւնը բացարձակապէս արգիլած է կանանց երկայնատուտուն շրջալստ հագնիլ՝ միջրոպներու ընդհանրացման առաջին առնելու համար:

— Աւստրիոյ Լէօնֆէլտէն քաղաքն ամբողջովին հրոյ ճարակ եղեր է ապրիլ 9ին: Եղած վնասը մէկ միլիոն Ֆիորին կը հաշուեն:

— Զիւպիոյ յառաջիկայ արուեստահանդիսին ծախուց գումարը վերջնապէս 118 միլիոն Ֆր. հաշուուած է:

— Ֆրանսական կառավարութիւնը 175.000 Փրանքի գնեց Լըվան կղզին, որ Միջերկրական ծովուն մէջ շատ կարեւոր դիրք մ'ունի: Առ այս 181.000 Փրանքի վարկ մը խնդրուած է խորհրդարանէն:

— Աւստրիոյ Կայսրը ըստ հնաւանդ սովորութեան Աւագ Հինգշաբթի օրը 12 աղքատաց ոտքերը լուաց և հացկերոյթ ու դրամական պարգեւներ շնորհեց անոնց:

— Ֆրանսայի արդարութեան գործոց նախարարը չըջաբերական մը ուղղելով ընդհանուր դատախապներուն, պատուիրած է դատ բանալ քաղաքական քարոզներով կարգապահութիւնը խանգարող եկեղեցականաց դէմ:

— Պէրլինի Մոսպիթ քաղաքապետական հիւանդանոցին օգնական բժիշկ՝ Տոքթօր Բանօն կարմրախտին բակեղը (միքոպ) գտեր է այդ հիւանդութենէն բռնուող տղայոց արեան մէջ:

— Մայիս 1ը տօնելու համար դարձեալ պատրաստութիւններ կը տեսնուին Եւրոպայի գործաւորական շրջանակաց մէջ:

— Պրէզիլիոյ կառավարութիւնը հանրային կարգապահութեան ապահով լինելուն համար պաշարման վիճակը վերացեր է:

— Ռուսիոյ Կայսրուհին Հինգշաբթի օրը մեկներ է Բեզբեսսուրկէն՝ Կաւկասիա երթալով տեսնելու համար իւր Կէորկի որդին, որ հիւանդ է:

— Զանգիպարի մէջ դարձեալ խառնաշփոթութիւնք ծագեր են: Բնիկները կաթոլիկ և բողոքական հաստատութեանց վրայ յարձակեր են յիւկանտա:

— Խրիմի Ս. Դանիէլ կոչուած կայսերական կալուածքի մէջ գտնուած են վերջերս երեւելի պատմական դրամներ: Ծառի մը արմատներուն տակ գտնուած է մի աման 50 արծաթեայ դրամներով, որոնք կը վերաբերին Ա. և Բ. դարուց Քրիստոսի ծնունդէն յետոյ: Դրամները յունական և հռոմէական են:

— Զուիցերիոյ Պալ քաղաքը յառաջիկայ յուլիս 9ին պիտի տօնէ իւր միացման 500րդ տարեդարձը: Նախ և առաջ Փոքր-Պալ և Մեծ-Պալ անուամբ Բէնի երկու ափանց վրայ գտնուող երկու անջատ քաղաքներ կը կազմէր այժմեան Պալ քաղաքը:

— Ռօշլիւեան համբուաւոր դրամատան Ֆրանքֆորթի ճիւղին դանձապահը մի քանի օրէ ի վեր անյայտ եղած է: ստուկին բացը 1 միլիոն մարք կը հաշուի:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պաշտօնաբաշխութիւնք. — Ելմտական նախարարութեան խորհրդական Գատրի պէյ Տրապիզոնի կուսակալ, Այտընի Տէֆէրսար՝ նամըք էֆ. Ելմտական նախարարութեան խորհրդական, Շէֆիք պէյ՝ Պօլսոյ վերաքննիչ ատենի ընդհ. դատախապի օգնական, Հաճի Սայիտ էֆ. Բահիյէի (Մուսուլ), Մէհմէտ Ալի էֆ. Շիրանի (Տրապիզոն) և Իպրահիմ Լութֆի էֆ. Թիրէպօլսի (Տրապիզոն) դայմագամ անուանեցան:

Ասիանց. — Հիճաքի կուսակալութեան գործակատար՝ Րիֆաթ էֆ. իւլայի Ա. և Աղբիւնուպօլսոյ կրթական տնօրէն՝ Սուրուրի պէյի իւլայի Բ. աստիճանները տրուեցան:

Պաշտօնացւոց. — Ելմտական նախարարութեան նախորդ խորհրդական և Տրապիզոնի նորընտիր կուսակալ՝ Գատրի պէյի Մէհմէտի Ա. և Ճանիկի կառավարիչ՝ Մէհմէտ Ճափի փաշայի Մէհմէտի Բ. պատուանշանները շնորհուեցան:

— Յունաց Պատրիարքը երեքշաբթի դիւեր Կայս. պալատան մէջ ընթերիէ յետոյ վեհ. Սուլթանին ներկայանալու պատիւն ունեցաւ:

— Ամէէ Յյուպ փաշա անցեալ կիւրակէ Աղբիւնուպօլսոյ մեկներ է Իզգէքքին չոգենաւով, և երէկ առաւօտ մայրաքաղաք ժամանեց:

— Ակնայ իլիճ գիւղի տասանորդի

տրոց վարձակալ՝ Պետրոս աղայի որդին Մեքեն հինգ ամսէ ի վեր Խարբերդի մէջ բանտարկուած լինելուն համար, ի Պոլիս Խալեար խանը հաստատուած Գրիգոր աղա Փափազեան աղերսագիր մատուցած է Ոստիկանութեան նախարարին, Առ այս քննութիւն բացուած է:

— Եզրապատի նախորդ խորի իսմայիլ փաշա, իւր որդւոյն՝ հանգուցեալ Թէվֆիգ փաշայի ժառանգութենէն իրեն ինկած մասը իւր թուանց և հարսին կը թողու:

— Յունաստանի թագաւորը Ս. Փրկչի պատուանշանին Ա. աստիճանը նուիրած է Կրօնական գործոց տեսուչ՝ Զիւլէր պէյի:

— Ելիսական նախարարութիւնը կ'ուսումնասիրէ օսմ. պարտաւորմանց և սէռները միացնելու ծրագիր մը:

— Ասանայի նախորդ կուսակալը մայրաքաղաքս ժամանց:

— Տիգրանակերտի գաւառին մէջ էնֆլուէնցան կը ճարակի:

— Միսախոսի Բէթին մարտի հասոյթը 173000 ոսկի եղած է, անցեալ տարուէն 9000 ոսկի աւելի:

— Հանգայի պարսուց վարչութեան մարտի հասոյթը 96300 ոսկի եղած է, անցեալ տարուէն 9500 ոսկի աւելի:

— Թէմալէի ընկերութեան գործառնութիւնները կատարելու համար Բէթին վարչութիւնը տարեկան 20.000 օսմանեան ոսկի պիտի ընդունի:

— Քարափանց ընկերութիւնն ի Սիլահտար Աղա սալայտուակ մը և երկաթուղի մը պիտի շինէլ տայ փոխադրութեանց ղեկավարութեան համար:

— Սինգալի բանտին տնօրէնի օգնական Մահմուտ էֆ. պաշտօնանկ եղած և դատի ենթարկուած է:

— Վեհ. Սուլթանը Յունաց Պատրիարքարանին՝ 750 ոսկի, 400 ոսկի ալ Պուլիարաց Էկզարքարանին և 250 ոսկի Հայ Հռոմէականաց Պատրիարքարանին նուիրած է Ս. Զատիկի առթիւ: Պատրիարքարանը և Էկզարքարան շնորհակալութեան ուղերձներ մատուցին ի Կայս. պալատ:

— Հելլենական դեսպանը, դեսպանուհին, առաջին քարտուղարը և Պ. Բօմանոս երեքը թի Պրուսա մեկնեցան:

— Յունաց Պատրիարք Նէօֆիլոս Ը. ի Կայս. Պէրաթը շաբաթ օր նոյն Պատրիարքարանը ղրկուեցաւ:

— Պարսից Շահը Առիւծու և Արեգական պատուանշանին Գ. աստիճանը չընորհած է թղթատարական և հեռագրական վարչութեան արուեստագէտ—խորհրդական՝ Մեքեն էֆէնտի Եիւզպաշեանի:

— Սամսոնէն Զարչամուղ չողեչարթ թրամուէյի գիծ մը հաստատուելու հա-

մար Աթանաս էֆ. Թէլուղլու և այլ Սամսոնցի վաճառականք արտօնութիւն խնդրած են:

— Կարնոյ անգլիական նորընտիր հիւպատոսն աստ ժամանեց Փիլիպէէն ուր դեր—հիւպատոս էր: Ի մօտոյ իւր նոր պաշտօնատեղին կը մեկնի:

— Արեւելի փողեքանոցին մէջ դրամ կտրուելու համար տրուած ոսկւոյն համար իրեն պատրաստութեան ծախք մինչեւ 50 000 ոսկւոյն մէկ զրուշ, մինչեւ 100 000 ոսկւոյն 30 փարայ և անկէ բարձր գումարներու համար 20 փարայ պիտի առնուի:

— Պրուսայի և Նիկոմիդիոյ մէջ 1891 ին 84.721 ունկի տեղական և 10 575 ունկի օտար շերամի հունտ բացուեւր և 3.388.613 քիլո խոզակ արտադրուեւր է: Տեղական հունտը նախորդ տարին 12.850 ունկի աւելի եղած և 7.935 ունկի պակաս օտար հունտ ներմուծուած է:

— Երզնկայի Գուրըշա գաւառակի նախնական դատարանին նախորդ նախագահ Սալիտ էֆ. և անդամ Համտի և Պօղոս էֆէնտիները զեղծմանց համար քննութեան ենթարկուած են:

— Ասանայի Խտարէի ժողովոյ հարցաքննիչ դատաւորին դէմ բողոք բարձուած է աշառութիւն ըրած լինելուն համար:

— Պրուսայի մէջ երկու թուրք երիտասարդներ սպաննուած գտնուեւր են: Կը կարծուի թէ զիրար սպաննած լինին և մասնակիցը կը փնտռուին:

— Քիւրեսեու և Հրեայներու միջեւ կռիւ մը տեղի ունեցեւր է անցեալ շաբաթ օր Օք—Մէյուանի: Կուռարարաց բոլորն ալ ձերբակալուած են:

— Պիլէնիկի մէջ կարմրախտը կը ճարակի:

— Կայս. զինուորական բժշկաց ուսանց կողմէ հնարուած հնտախտի դեղերը փորձելու համար Սուրիա գնացող բժիշկը իրենց պաշտօնն աւարտելով կը վերադառնան:

— Տոքթօր Վուլքովիչի սպանչաց դատը Պայրամէն յետոյ պիտի տեսնուի:

— Բուսէլիէն մայրաքաղաքս բերուած ցորեն ու ալիւրը յատուկ պաշտօնէից ձեռամբ պիտի քննուին այսուհետեւ Սիւրէէի կայարանին մէջ:

— Թէմալէի ընկերութեան բաժնետէրք ժողովն իւր ի Փարիզ վերջին գումարման մէջ որոշեւր է 2000 նոր բաժնետոմս հանել:

— Ասանայի մէջ պաճարախտ երեւան եւր է:

— Սիւլիքի մետրապօլիտ Տ. Կերմանոս որ մայրաքաղաքս կը գտնուէր, չորեքշաբթի օր վախճանեցաւ: Իւր գոյքերը կնքուած են Պատրիարքարանի կողմանէ:

— Կէլպզէի գիւղին վրայ յարձակում գործող էտէէմ և Աշիր աւազակներուն ընկերներն ալ ձերբակալուած են:

— Պօլսոյ Զէյրէք թաղի կոյուղիէն քառասնորեայ աղջկան մը գիակը գլուխուէր է:

— Սաֆա—Մայնիկէնի դուքսն ու դքսուհին այսօր մայրաքաղաքս կը ժամանեն արեւելեան ճեպընթաց կառա-

խումբով: Դքսուհին քոյրն է Գերմանիոյ կայսեր: Մեծ պատրաստութիւնք եղած են հարկ եղած պատուով զիրենք ընդունելու համար թէ՛ ի սահմանագլուխն և թէ՛ աստ:

— Հրեայներուն Սպանիայէն թուրքիա գաղթելուն 400րդ տարեդարձին առթիւ Բարիլու Հրեական Միութիւնը Վեհ. Սուլթանին երախտագիտական ուղերձ մը զրկած է յորս թուելով Հըրէից այն ատենուան տառապանքը, ի վեր կը հանէ այժմեան անդորրութիւնը:

— Մաքրիգիլի Յունաց եկեղեցւոյն մէջ անցեալ գիշեր գողեր մտնելով, 200 ոսկւոյ մօտ սրբազան անօթներ գողցեւր են:

— Սելանիկի թիկուղ գաւառակն ասպատակող երեք աւազակներ ողջ ձերբակալուեւր են:

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ «ԾԱՂԻԿ»Ի

Գ. Ս. Մ. ի Պայազիս. — Նոր-Դար ուզած էք, բայց բաժանորդագիրն կանխիկ է. կա՛մ ուղղակի թիֆլիս՝ այդ լըրագրոյ խմբագրութեան և՛ կա՛մ մեզ ղրկելու էք բաժանորդագիրն:

Գ. Մ. է. ի Մաղնիսա. — Ցարդ չը վճարեցին այդ գումարը և վճարելու ալ միտք չունին. կ'առարկեն թէ իրենք չեն ստացած: Ի՞նչու ուղղակի մեզ չէք ղրկած:

Ա. Զ. Դ

Լուսանկարի արհեստասէրը (ամաթօր) մասնագէտ լուսանկարչաց գործոյն նման կատարեալ չգտնելով իրենց քաշած լուսանկարները, թերեւս կը կարծեն թէ ճարտար պատկերահանաց մասնագիտութիւնն է պատճառը, բայց ո՛չ, բըղուսն է որ մասնագէտի աշխատութիւնը կը զեղեցկացնէ: Արհեստասիրաց այս անհրաժեշտ բըղուսը պատրաստ եմ, գոհացուցիչ վարձատրութեամբ ուսուցանել թէ՛ դրականի (բոզեգիլ) և թէ՛ ժխտականի (նէկադիլ) վրայ: Փափաքողք՝ իրենց հետ առնելով գըլիօէները՝ պէտք է դիմեն Իւսկիւտար, Մէլամաղ Տէիրմէն փողոց, Պէրպէր օղլուի տունը, Գծագրութեան Ուսուցիչ

Մ. ՊԱՐՍԱՄԵԱՆԻ

ԱՐԺԷՔ ԳՐԱՄՈՑ			
Պատ. իրան 100 դր. էն			
Մէճիլիէ	108	7 Վ. Երնոց	102 20
Քառ օրդ մէճիլ	106	30 Բաւիդ քօլ	89 33
Մանր մէճիլ	101	Շորքալէն	87 22
Մէթալի	97	20 Գրիմից	51 15
Հինգնոց	101	40 Անգլ. լիբա	110 4
Մանէթ թղթադրած 8 98			
Գնեսլիտէ	21	21 Բուս. Երկ.	72 3/4
Թահիլի. Օսմ.	80	Թապիլիէ	18